

Վ. Համբարձումյան
ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ

ՍՍՌ-Մ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԴԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԶ¹

Այսօր մենք հավաքվել ենք Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Գիտությունների Ակադեմիայի 220-ամյա հոբելյանի առթիվ: Դժվար է նշել մի ուրիշ գիտական հաստատություն, որն ունեցած լինի Համաժողովրդական Գիտությունների Ակադեմիայի նման փայլուն, հոյակապ անցյալ՝ և նրա նման մեծ, եռանդով ու գործունեությամբ լի ներկա: Կարելի է ասել, որ եթե երկրագնդի վրա եղած բազմաթիվ Ակադեմիաների մեջ միայն երկուսը կարող են համեմատվել մեր հոբելյանի հետ իրենց փառապանծ անցյալով (Փարիզի Գիտությունների Ակադեմիան և Լոնդոնի Թագավորական Ընկերությունը), ապա դրանցից ոչ մեկը ներկայումս չի կարող մինչև անգամ երազել այնպիսի բազմակողմանի և եռանդուն գիտական աշխատանքի մասին, որ այսօր մենք դիտում ենք մեր Համաժողովրդական Ակադեմիայում:

Եվ մենք կարող ենք պարծենալ, որ այդպիսի մի գիտական հաստատություն ստեղծել է մեր ժողովուրդների ընտանիքի ղեկավար ազգը՝ մեծ ուսև ժողովուրդը, հայ ժողովրդի ավագ եղբայրը և լավագույն բարեկամը:

Ռուսաստանի Ակադեմիան հիմնվեց և կազմակերպվեց համաձայն Պետրոս Մեծի նախագծի: Ճիշտ է, Պետրոս Մեծը չապրեց մինչև Ակադեմիայի բացման օրը. Ակադեմիան բացվեց միայն նրա ամուսնու՝ Եկատերինա I-ի Թագավորության օրով: Ակադեմիայի առաջին նիստը կայացավ 1725 թ. դեկտեմբերի 27-ին:

Ակադեմիայի հիմնադիրը՝ Պետրոս Մեծը Ակադեմիայի կազմակերպման կապակցությամբ կանգնած էր մի դժվարին խնդրի առաջ: Այդ ժամանակվա Ռուսաստանը դեռ չուներ անհրաժեշտ գիտական կադրեր: Պետրոս Մեծը որոշեց Ակադեմիայի համարյա թե ամբողջ կազմը հրավիրել արտասահմանից: Գուցե այն ժամանակ շատերին այդ քայլը թվար չափազանց համարձակ և ընդգեմ Հայրենիքի շահերի ու ազգային ինքնասիրության: Բայց Պետրոս Մեծը, որպես հեռատես ու հանճարեղ պետական գործիչ և ջերմ հայրենասեր, լի հավատով դեպի իր հայրենիքի ապագան, դեպի ուսև ժողովրդի շնորհքը և տաղանդը՝ հասկանում էր, որ զլխավորն է՝ հայրենի հողի վրա ցանել միայն գիտության սերմեր, և այդ սերմերից կստացվի մեծ ուսև գիտության առատ բերքը: Պատմությունը ցույց տվեց, որ այդպես էլ եղավ: Կարճ ժամանակամիջոցում օտարերկրյա գիտնականները փոխարինվեցին ուսև ժողովրդի երիտասարդ գիտության ներկայացուցիչներով:

¹ Զեկուցված է 1945 թ. հունիսի 8-ին ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր ժողովի նիստում՝ նվիրված ՍՍՌ-Մ Գիտությունների Ակադեմիայի 220-ամյակին:

Ակադեմիայի առաջին կազմի մեջ էին հանճարեղ մաթեմատիկոս էյլերը և հայտնի Նիկողայոս Բերնուլին, ինչպես նաև հիդրոդինամիկայի հիմնադիր, հիշյալ Նիկողայոս Բերնուլու եղբայր Դանիել Բերնուլին:

էյլերը մաթեմատիկայի պատմության մեջ ամենաբեղմնավոր գործիչներից մեկն է: Այդ տեսակետից նրա հետ կարող են համեմատվել միայն Գաուսը և Կոշին: Չկա ժամանակակից մաթեմատիկական անալիզի մի գլուխ, որը կարելի լիներ շարադրել առանց Լեոնարդ էյլերի անունը, նրա թեորեմները հիշելու: էյլերը ստեղծել է նաև մաթեմատիկայի նոր ճյուղեր, օրինակ՝ վարիացիոն հաշիվը: Եվ այդ աշխատանքների մեծ մասը նա կատարել է Պետերբուրգում որպես Ռուսաստանի Ակադեմիայի անդամ: Նույնպես բեղմնավոր է եղել և Բերնուլիների աշխատանքը:

Բայց Գիտությունների Ակադեմիայի պատմության ամենապայծառ էջերից մեկը բացվում է այն օրվանից, երբ Ակադեմիայի կազմի մեջ է մտնում ռուս ժողովրդի մեծագույն հանճարը՝ Միխայիլ Վասիլևիչ Լոմոնոսովը:

Լոմոնոսովը գիտության պատմության մեջ մի արտակարգ երևույթ է: Մի կողմից նա հանդիսանում է նոր ռուս գրականության հիմնադիրը, ռուս գրական լեզվի ստեղծողը, մյուս կողմից՝ նա ռուս բնագիտության հիմնադիրն է և թողել է կարևորագույն աշխատություններ ու գյուտեր բնագիտության համարյա բոլոր բնագավառներում: Նա է առաջինը, որ գտել է նյութի և էներգիայի պահպանման օրենքները—ողջ բնության հիմնական օրենքները:

Լոմոնոսովը ծնվել է 1711 թ., կարգալ սովորել է իր բարեկամներից մեկի մոտ: Մինչև 1730 թիվը, այսինքն 19 տարեկան հասակը, նա մնացել է իրենց գյուղում՝ Դենիսովկայում: Միայն դրանից հետո նրան հաջողվում է ստանալ սրատեսմանիկ կրթություն. 1736 թ. նա գործուղվում է արտասահման, որտեղ և կատարելագործվում է հինգ տարվա ընթացքում: 1742 թ. նա դառնում է Ակադեմիայի ադյունկտ, իսկ 1745 թ.՝ Ակադեմիայի անդամ-պրոֆեսոր: 1754—1755 թ. թ. նա կազմակերպվում է Համալսարան, իսկ դրանից հետո սկսում է ղեկավար դեր խաղալ Ակադեմիայում: Վախճանվում է 1765 թ. Պետերբուրգում:

Չնայած ժամանակակից գիտնականները, որոնց թվում և էյլերը, մեծ հիացմունքով էին նայում Լոմոնոսովի գիտական ստեղծագործությանը, բայց նրա մահից հետո նրա որոշ աշխատություններ անուշադրության էին մատնվել. այդ կապված էր մասամբ այն բանի հետ, որ Լոմոնոսովը ուշադրություն չէր դարձնում իր աշխատությունների տպագրության հարցին:

Մեր դարի սկզբներին միայն պրոֆեսոր Մենշուտկինին հաջողվեց նյութերի ուսումնասիրության հիման վրա պարզաբանել Լոմոնոսովի ծառայությունների իսկական արժեքը:

Ահա Լոմոնոսովի ծառայությունների մի քանի օրինակներ.

1. Քիմիա.—Նյութի պահպանման օրենքը, որ նա իր բազմաթիվ փորձերի հիման վրա գտավ ավելի առաջ, քան Լավուազիե:

2. Ֆիզիկա.—էներգիայի պահպանման օրենքը (Մայերից 100 տարի առաջ): Նյութի մոլեկուլար կինետիկ տեսությունը ոչ միայն հիմնավորվել է Լոմոնոսովի կողմից, այլև Լոմոնոսովը այդ տեսությունից մի շարք եզրակացություններ է արել և ստուգել դրանք. նա ճիշտ էր հասկացել ջերմության

բնույթը և ջերմային ու մեխանիկական էներգիայի համարժեքությունը: Լոմոնոսովն է ստեղծել Ակադեմիայի քիմիական լաբորատորիան: Նա ղեկավարել է ֆիզիկական լաբորատորիան:

Նա զբաղվում էր մետալուրգիայով և իր լաբորատորիայում կատարում էր հանածոների բազմաթիվ անալիզներ:

Լոմոնոսովն աստղաբաշխ էր: Նա ցույց տվեց, որ Վեներան ունի մթնոլորտ, թեև այդ գյուտը վերագրվում է Հերշելին: Նա կատարելագործեց անդրադարձնող հեռագրիտակային սխեմաները:

Լոմոնոսովն աշխարհագետ էր: Նա ուշադրություն դարձրեց հյուսիսային ծովային մեծ ճանապարհի վրա: Այդ ճանապարհի օգտագործումն սկսվեց միայն մեր ժամանակ:

Նա մեծագույն ծառայություններ մատուցեց ռուս գրականությանը և գրականագիտությանը, ռուսաց լեզվին, արվեստին: Նրա հանձարեղ մոդարիկան, որը գտնվում է Ակադեմիայի (Լենինգրադի) շենքում և նվիրված է Պոլտավայի ճակատամարտին, հիացնում է բոլոր այցելուներին: Բայց դրանով չի սահմանափակվում նրա գործունեությունը:

ա) Մեզ համար կարևոր է, թե ինչպես էր քաջալերում Լոմոնոսովը ռուս երիտասարդությանը գիտության գործում: Բավական է բերել այսօրինակ նրա տողերը.

Дерзайте, ныне ободренны
Раченьем Вашим показать,
Что может собственных Платонов
И быстрых разумом Невтонов
Российская земля рождать.

բ) Նա ձգտում էր գիտությունն ի սպաս դնել իր հայրենիքի կարիքներին: Շնորհիվ Լոմոնոսովի՝ Ակադեմիայում ստեղծվեց վերջինիս լավագույն տրադիցիաներից մեկը՝ չկտրել գիտությունը կյանքից, ուսումնասիրել Հայրենիքը, ծառայել ժողովրդին և պետությանը ամբողջ սրտով ու նվիրվածությամբ: Եվ պետք է խոստովանել, որ Գիտությունների Ակադեմիան իր գործունեության ընթացքում ոչ միայն պահպանեց այդ սրբազան տրադիցիան, այլև է՛լ ավելի ուժեղացրեց նոր, սովետական հասարակակարգի պայմաններում:

Արդեն այդ ժամանակներից Ակադեմիայի գիտական էքսպեդիցիաները, կապը տեղական բնությունն ուսումնասիրող ինտելիգենցիայի հետ, երկրի ծայրամասերի հետ՝ կազմում էին Ակադեմիայի աշխատանքի մշտական սովորությունները:

Լոմոնոսովի գործունեությունը փաստորեն որոշեց Ակադեմիայի դեմքը, նրա ուղղությունը: Շնորհիվ այդ ճիշտ ուղղության՝ Ակադեմիան սկսեց արագորեն զարգանալ: XIX դարում և XX դարի սկզբում Ակադեմիայի աշխատանքները գլխավորում են մի շարք տաղանդավոր ռուս գիտնականներ, որոնք անջնջելի հետք են թողնում գիտության պատմության էջերում:

Մաթեմատիկայի բնագավառ: Այստեղ հռչակվել է Չերիշևի անունը: Չերիշևի աշխատանքի գլխավոր ուղղություններից կարելի է բերել՝ թվերի տեսությունը, հավանականության տեսությունը, մեխանիզմների տեսությունը: Չերիշևի հռչակը համաշխարհային է:

Տեսության և պրակտիկայի կապին Չերիշեֆի առանձին նշանակութիւն էր տալիս: Նա գրում էր.

«Տեսության և պրակտիկայի մերձեցումը տալիս է ամենանպաստավոր արդյունքները, բայց միայն պրակտիկան չէ, որ շահում է դրանից: Իրենք՝ գիտութիւնները զարգանում են պրակտիկայի ազդեցութեան տակ: Նա բաց է անում գիտութիւնների առաջ հետազոտութեան նոր առարկաներ կամ թե հայտնի առարկաների նոր կողմեր: Թեպետև մաթեմատիկան վերջին երեք դարերի մեծ երկրաչափների աշխատութիւններով հասցված է զարգացման բարձր աստիճանի, բայց պրակտիկան ցույց է տալիս, որ մաթեմատիկական գիտութիւնները որոշ տեսակետից թերի են: Նա առաջարկում է նոր հարցեր և առաջ է բերում հետազոտութեան նոր մեթոդներ: Եթե տեսութիւնը շատ է շահում հին մեթոդների նոր կիրառումներից և զարգացումներից, ապա նա ավելի շատ է ստանում նոր մեթոդների հայտնաբերումից և այդպիսի դեպքերում գիտութիւնը հավատարիմ ղեկավար է ձեռք բերում հանձին պրակտիկայի» (Պետերբուրգի Համալսարանի հանդիսավոր նիստում 1856 թ. Չերիշեֆի արտասանած ճառից):

Պետերբուրգի մաթեմատիկական դպրոցը տվել է մի շարք ականավոր գիտնականներ՝ Չերիշեֆ, Լյապունով, Մարկով, Կորկին, որը զբաղվել է թվերի տեսութեամբ, Ստեկլով: Չերիշեֆը, Լյապունովը և Մարկովը հանդիսանում են ժամանակակից հավանականութեան տեսութեան հիմնադիրները: Այժմ նրանց արադիցիաները շարունակում են Մոսկվայում աշխատող հայտնի սովետական գիտնականներ՝ ակադեմիկոսներ Բերնշտեյնը և Կոլմոգորովը:

Աստղաբաշխութեան գծով.—Ակադեմիայում աշխատել են համաշխարհային անուններ՝ Ստրուվեն, որը զբաղվել է աստղերի ճշգրիտ դիրքը երկնքի վրա որոշելու խնդրով, Բրեդիխինը, որը ստեղծել է գիսավորների տեսութիւնը, և Բելոպոլսկին, որը ժամանակակից աստրոֆիզիկայի հիմնադիրներից մեկն է:

Ֆիզիկայի գծով.—Կարելի է ասել, որ Ակադեմիան տվել է մեծ թվով ականավոր գիտնական-ֆիզիկոսներ, որոնցից պետք է նշել Լենցին, Լեբեդևին, Գոլիցինին: Լեբեդևն ապացուցել է լույսի վանման ուժը. Գոլիցինը սեյսմոլոգիայի հիմնադիրն է և այլն:

Բիմիայի գծով.—Ակադեմիան տվել է այնպիսի խոշոր մեծ գիտնական, ինչպիսին է Զինինը, որն զբաղվել է օրգանական քիմիայով, և, վերջապես, Բուտերովը, որը ստեղծել է օրգանական քիմիայի ստրուկտուրային տեսութիւնը: Այնուհետև հայտնի է Մենդելեևը, որը, ճիշտ է, չի եղել Ակադեմիայի իսկական անդամ, սակայն կարողացել է խոշոր ներդրում կատարել գիտութեան այդ բնագավառում:

Երկրաբանութեան գծով կարելի է նշել Կարպինսկուն:

Կենսաբանական գիտութեան գծով Ակադեմիան ունեցել է մի շարք կենդանաբաններ և բուսաբաններ, ինչպես և ֆիզիոլոգներ, որոնցից ամենահռչակավորն է Պավլովը, որը ստեղծել է սլայմանական ռեֆլեքսների ուսմունքը:

Հասարակական գիտութեան գծով Ակադեմիան հատկապես խոշոր գործ է կատարել կովկասագիտութեան և հնագիտութեան բնագավառներում: Հնագիտութեան բնագավառում կարելի է նշել հայտնի ուսու հնա-

գետ Ջաբելինին, որը եղել է Ակադեմիայի տեխնիկական պահակը և հետագայում հնագիտության ուղղությամբ խոշորագույն աշխատանքներ է կատարել հունական և սկյութական դամբարանների հետազոտության ուղղությամբ:

Պետք է հիշել հայտնի Բրոսեին և, վերջապես, Մառին, որը մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիան կատարեց իր հայտնի պեղումները Անիում և ռևոլյուցիայից հետո ավելի ծավալեց իր գիտական աշխատանքը:

Պավլովի, Կարպինսկու և Մառի անունները արդեն թույլ են տալիս անցնել դեպի սովետական շրջանը:

Սովետական շրջանում Ակադեմիան դառնում է երկրի գիտական շտաբը, նրա պաշտոնական կենտրոնը: Ակադեմիան ոչ միայն ամենուրեք օգնություն է ստանում կառավարությունից, այլև ինքը, իր հերթին, օգնում է կառավարությանն ու ժողովրդին երկիրը վերակառուցելու գործում:

Ակադեմիան օժանդակում է երկրի ինդուստրացմանը, գյուղատնտեսությունը նոր հեմքերի վրա վերակառուցելու գործին, Ստալինյան Հնգամյակները կազմելու և իրագործելու աշխատանքներին, նրանց գիտատեխնիկական հիմնավորմանը: Ակադեմիան դառնում է Լենինի—Ստալինի մեծ պարտիայի օգնականը երկրի պաշտպանությունը հզորացնելու գործում: Ակադեմիայի գործունեությունը ծավալվել է: Հիշենք միայն մի քանի անուններ:

Մաքսիմատիկայի գծով. — Վինոգրադովը կարողացել է լուծել Վարինգի և Գուլդբախի պրոբլեմները: Կոխլովը տվել է նավերի կայունության և անխորտակելիության տեսությունը: Կարևորագույն աշխատություններ են տվել նաև տաղանդավոր մաթեմատիկոսներ Մ. Մ. Բերնշտեյնը, Կոլմոգորովը, Սորոկինը, Սմիրնովը, Պոնոմազինը:

Ֆիզիկայի գծով.— Հիմնվել են մի շարք ֆիզիկական ինստիտուտներ: Իոֆֆեն այս բնագավառն ուսումնասիրելու համար ստեղծել է նոր ինստիտուտ և կիսահաղորդիչների մասին տվել է իր տեսությունը: Մանդելշտամը տատանումների տեսության բնագավառում տվել է մի շարք աշխատություններ, որոնք չափազանց կարևոր են ռադիոտեխնիկայի տեսակետից, Ռոժեկսովենսկին հիմնել է մեզանում օպտիկական արդյունաբերությունը, Կապիցայի ինստիտուտում հայտաբերվել են հեղուկ հելիումի մի շարք նոր հիմնական հատկություններ, որոնք անսովոր են թվում կլասիկ հիդրոդինամիկայի տեսակետից:

Բիմիայի բնագավառում հայտնի են Ֆավորսկու, Լեբեդևի, Ջելինսկու, Սեմյոնովի, Ֆրումկինի աշխատությունները:

Բիոֆիզիկայի գծով հայտնի են Բախը, Պալլադինը և Պառնասը:

Նրկրաբանությամբ գծով՝ Կարպինսկին, Լևինսոն-Լեսինգը, Գուբկինը, Վերնադսկին, գեոֆիզիկայի գծով՝ Ֆերսմանը:

Աշխարհագրության գծով՝ Շմիդտը, Շիրշովը, Բերգը:

Կենսաբանությամբ գծով՝ ֆիզիոլոգներ—հանճարեղ Պավլովը, Լ. Ա. Օրբելին, Ուխտամսկին և Կոմարովը, որը ստեղծել է նոր տեսություն բույսի տեսակների մասին:

Տեխնիկայի բնագավառում պետք է նշել Վինտերին և Վեդենսկին՝

էլեկտրո-տեխնիկայի գծով, իսկ ռադիոյի ասպարեզում պետք է նշել Վվենդենսկուն, Բոնչ-Բրուսիչին: Նախքան այդ գիտնականները ռադիոյի ասպարեզում մենք կարեւոր ուսումնասիրութիւններ չունեինք, իսկ այժմ այս բնագավառում ևս մեծ հայտնագործումներ ունենք: Զեմֆի տեխնիկայի ասպարեզում հայտնի են Յակովլևը, Միկուլինը և Կոստիկովը, որոնք ստեղծել են նոր զենք և Կարմիր Բանակին հնարավորութիւն են տվել ոչնչացնելու գերմանական բանակը և հաղթանակ տանելու նրա դեմ:

Պատմութեան ասպարեզում առաջին հերթին պետք է հիշել հնագետներ Մառին, Օրբելուն և մյուս կողմից՝ Տառլեին, որը տվել է Ղրիմի պատերազմի պատմութիւնը դիվանագիտական տեսակետից, և Գրեկովին, որն ուսումնասիրել է Կիւյան պետութեան ծագումը:

Լեզվի գծով առաջին հերթին պետք է նշել Մառին, որը տվել է լեզվի նոր, մարքսիզմի տեսակետին շատ մոտ տեսութիւն: Այնուհետև պետք է նշել Մեշչանինովին, որը նշանավոր ծառայութիւններ է մատուցել խաղաղատութեանը:

Ակադեմիան ստեղծել է մի շարք գրականագիտական հիմնարկներ, որոնք զբաղվում են ռուս և համաշխարհային գրականութեան առանձին ճյուղերի ուսումնասիրութեամբ, օրինակ՝ Պուշկինի, Տոլստոյի և այլ գրողների ստեղծագործութեան ուսումնասիրութեամբ: Ակադեմիան մշակում և ուսումնասիրում է էկոնոմիկայի, իրավունքի և, վերջապես, փիլիսոփայութեան հարցերը:

Ակադեմիան սովետական իշխանութեան օրով աճեց: Ակադեմիայից ծնունդ առան ռեսպուբլիկական Ակադեմիաներ: Ակադեմիան ունի 150 իսկական անդամ, 200 թղթակից անդամ, մի քանի հազար գիտական աշխատակիցներ: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին գիտնականների այդ մեծ բանակը, ընկեր Ստալինի ցուցումներով, իրեն մոբիլիզացված հայտարարեց Կարմիր Բանակին օժանդակելու համար: Ընկեր Ստալինն իր 1944 թ. նոյեմբերի 6-ի ղեկուցման մեջ բարձր գնահատական տվեց սովետական գիտնականների աշխատանքին: Այժմ Ակադեմիան կենտրոնացնում է իր ուշադրութիւնը վերակառուցման և երկրի զարգացման հարցերի վրա:

Համամիութենական Գիտութիւնների Ակադեմիան, ռուս ժողովրդի այդ հարազատ և սիրված գավալը, Հոկտեմբերյան Ռեւոլուցիայի և Հայրենական Մեծ պատերազմի շրջաններում բռնեց շատ պատասխանատու և խիստ քննութիւններ: Ակադեմիան ցույց տվեց, որ ինքը իր ժողովրդի, սովետական ժողովրդի հավատարիմ ծառան է:

Խրախուսված Մեծ Ստալինի գնահատականով, նրա ղեկավարութեամբ, Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միութեան Գիտութիւնների Ակադեմիան ապագայում կհասնի առաջավոր գիտութեան նոր, ավելի բարձր գագաթների: Եվ այսօր, Ակադեմիայի 220-ամյակին, մենք բացականչում ենք՝

Կեցցե՛ք Մեծ, տաղանդավոր ռուս ժողովուրդը:

Ողջուն Գիտութիւնների Համամիութենական Ակադեմիային:

Կեցցե՛ք առաջավոր գիտութիւնը: